Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4542

100

281·69-
R-13

Pitpipu 1883

1490
281.69
Ջ-13
1 Sept 83/834
104
1490.

ՄՈՂՆԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ

ԹԵՄԻ ՀԱՑՈՅ ՎԻՃԱԿԱՒՈՐ ԿՕՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԱՆԴԱՄ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԲԷՆԳԼԵԱՆՑԻՆ 'Ի ՍՐՏԷ ՆՈՒԷՐ:

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

«Մշակ» ամենօրեայ թերթի №61-ի մէջ զետեղուած իմ նամակում ես յիշատակել էի Մողնու եկեղեցու առաջ քահանայ Արիստակէս Բէնգլեանցի (sic!) մի մանաւոր քաջագործութեան մասին, որ Սբ. Մինաս եկեղեցու միաբանութիւնից Մողնուոյ եկեղեցին փոխադրելու ժամանակ, առանց ոչ օրի գիտութեան, տարել էր իւր հետ իմ պապի յիշատակ տուած թէ հին տպագրութեամբ և թէ շէնքի գեղեցկութեամբ հազուագիւտ արծաթապատ Աւետարանը և նոյն եկեղեցւոյ ծխական ուսումնարանից արժանայիշատակ հանգուցեալ Յովսէփ Էֆէնդեանի կտակակատար Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձութեան յիշատակ տուած պահարանը գրքերով հանդերձ: Ինչպէս «Մշակ»-ի ընթերցողները գուցէ, յիշում են՝ ես նորան ժամանակ էի նշանակել մինչև Զատիկ, որ մեր Աւետարանը անպատճառ վերադարձնէ, իսկ պահարանի պահանջը բոլորովին թողած էի թեմական ցեսչի վերայ: Նշանակեալ ժամանակից 10 օր անցնելով և Արիստակէս քահանայ Բէնգլեանցից իմ օրինաւոր բաւականութիւնը չստանալով՝ հարկադրուեցայ դիմել վիճակային կոնսիստորիային և բերանացի բողոքել 'Ի ներկայութեան Սրբազան վիճակաւոր Առաջնորդի և Ատենի անդամոց, 'Ի թիւս որոց գտնվում է և քահանայ Բէնգլեանցը նորա մեր Աւետարանի տանելոյ մասին, որոյ մեր յիշատակ լինելը նա բացէ 'Ի բաց մերժելով, խնդրից Ատենին բացատել իմ բողոքը իրրև պահանջ յարուցանելու իրաւունք չունեցողի: Համաձայն Սրբազան Ատենապետի առաջարկութեան ես ըստ օրէնի դէնի ներկայացնելով Ատենին Սբ. Մինաս եկեղեցու կայից մասեանը՝ երևաց իմ պահանջիս իրաւացի լինելը և Տէր-Արիստակէսի մերժումի լուրջ ատութիւնը, վասնորոյ և հրամայուեցաւ Սրբազանի կողմից յիշեալ Աւետարանը ներկայացնել Կոնսիստորիա և այնտեղից պաշտօնապէս վերադարձնել Սբ. Մինաս եկեղեցու երեցփոխանին, որը և կատարուեցաւ Զատկից 24 օր յետոյ, ուրեմն իմ անցեալ գրութիւնից յիսուն օր անցած, իսկ հանգուցեալ Էֆէնդեանի յիշատակ տուած պահարանը իւր մէջ երբեմն պարունակող դասական պիտոյքներով մնաց մինչև այս օրս իրան ուսումնարաստէր քարոզող և ուսումնարանի օգտին գրամական նպաստ չխնայող (!!!) Ախալցխացի Արիստակէս աւագ քահանայ և վիճակային Ատեանի անդամ Բէնգլեանցի տանը:

Այս ամենայն ճիշդ եղելութիւնից յետոյ՝ Տէր-Արիստակէսը յանկարծ հանդէս է գալիս մեր «Մշակ»-ի մէջ համարում իւր նամակը, իբրև պատասխան նորա դէմ ուղղած իմ անցեալ գրութեանս, որով նախ՝ զրպարտութիւն է համարում իմ նամակի բովանդակութիւնը և շշնջփիչ իւր պատուիրակներով՝ բացատրում Էֆէնդեանի պահարանի և նորա մէջ եղած բոլոր գրքերի և դասական պիտոյից տանելը, վկայ հրաւիրելով իրեն յաջորդները պ.պ. Շահբուդաղեանը և Տէր-Թովմասեանը: Երրորդ՝ համոզուած լինելով, որ մեռած մարդուց յետոյ կարելի է ամենայն բան քարոզել՝ խնդիր Աբամելիքեանց Սողոմոնի վերայ է բարդում իւր յանցանքները և առ Տէր հանգուցեալ Գաբրիել Արքեպիսկոպոսի առայս եղեալ պահանջը ժխտում: Չորրորդ՝ իւր նամակում այնպէս է յիշատակում, որ իբր թէ մեր Աւետարանը նա վերադարձրել է իմ անցեալ գրութիւնից առաջ: Հինգերորդ՝ ինձ էլ իւր նման պարզամիտ է կարծում, որ իբր թէ ես պարծենում եմ պապիս յիշատակ տուած Աւետարանով, մինչդեռ եկեղեցու շինութեան համար իմ ստորագրուած 30 ռ. ցարդ չվճարելով, հաշուառեսները մտադիր են իմ անունս ջնջել ժապաւենեալ մատեանից (!!!):

Այս ամեն վայրաբանութեանց թէև ես աւելորդ էի համարում մի բառ անգամ պատասխանել և Տէր-Արիստակէս Բէնգլեանցի համար ժամակորոյս լինել, բայց 'Ի նկատի ունենալով «Արարատ» ամսագրի ներկայ տարոյս 6-րդ համարի «Այլ և Այլք» բաժնում զետեղուած խմբագրութեան կողմից առաջարկուած հրաւիրող վիճակաւոր Առաջնորդի կոնսիստորիայի և թեմական ցեսչի ուշադրութիւնը «Մշակ» լրագրի 85 համարում տպուած Բէնգլեանցի նամակի վերայ, հարկաւոր եմ համարում «Արարատ»-ի խմբագրութեան այդ արդարայի և ազնիւ պահանջի քննութեանը նպաստելու համար տասարեզ հանել ճշմարտութիւնը, պատասխանելով Արիստակէս քահանայի նամակի վերոյիշեալ հինգ յօդուածներին առանձին առանձին, սակայն ոչ լրագրութեան միջոցաւ, այլ այս առանձին յաւելուածով: Ա.) Իմ նամակիս բովանդակութիւնը ամենևին զրպարտիչ չէր, այլ բոլորովին ճշմարիտ, որովհետև ինչպէս մեր Աւետարանը նորա մօտ էր ներկայ գրութիւնից առաջ ամբողջ վեց տարի, այնպէս էլ այս բոլորիս հանգուցեալ Էֆէնդեանի պահարանը նորա մօտ է գտնուում, որը իմ անցեալ գրութիւնիս մի տարի յետոյ անձամբ տեսել է նորա տանը իւր իսկ միաբան Տէր Մուշեղ քահանայ Տէր-Ղևոնդեանցը և ներկայ տարուս Յունիսի 5-ին 'Ի ներկայութեան ժողովրդականաց Սբ. Մինաս եկեղեցու և միաբան քահանայից, նոյնը վկայեց լրագրի միջոցաւ Տէր-Արիստակէսի կողմից վկայ հրաւիրուած Յովսէփ Տէր-Թովմասեանցը կցելով իւր ջուցմանը և այն թէ՝ մինչև անգամ ուսումնարանի նախկին բոլոր աշակերտները ևս վկայ են թէ ինչպէս Տէր-Արիստակէսը հանել էր պահարանի մէկ դուռը, տեսնելով՝ որ մշակները չեն կարողանում դուրս բերել ուսումնարանի նեղ դռնից: Երկրորդ՝ այն թէ պահարանը գրքերով հանդերձ նա առանց ոչ օրի թոյլատրութեան տարել է՝ վկայ են Սբ.

49820-ակ
ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ՀՍՍՌ-Արմ. ССР
Ա. Մ. Ա. Մասեանյան
36357-66
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

2012

Մինասի նախկին երեցփոխան պ. Խաչատուր Ագարեանցը, Մարիամեան օրիորդական ուսումնարանի վարժուհի օրիորդ Տէր-Աստուածատուրեանը, նոյն ուսումնարանի տեսուչ պ. Կարապետ Թէմուրազեանը, Սբ. Մինասի ժամկոչ Մահտեսի Միքայէլը, որ 'ի ներկայութեան շատ անձանց ցուցմունք տուեց, որ ինքն է բերել մշակները պահարանը Տէր-Արիստակէսի տունը տանելու համար և վերջապէս 1887 թւին ես ինքս անձամբ տեսել եմ նորա տանը ուսումնարանի պահարանը, որը յանձնուած էր ինձ 1871 թւին իբրև նախկին ուսուցչի Սբ. Մինասի ուսումնարանի: Երրորդ՝ նա մեր Աւետարանը վերադարձրել է, ինչպէս վերը յիշեցինք, իմ անցեալ գրութիւնից յետ [illegible] օր յետոյ՝ երևեցնելով Ատենի մէջ իւր ստութիւնը, ինչպէս վկայ են կոնսիստորիայի բոլոր անդամները և ծառայողները: Չորրորդ՝ ես չեմ պարծեցել իմ պապիս յիշատակով, այլ պահանջել եմ, որ նորա յիշատակը ջնջուած չլինի Տէր Արիստակէսի ձեռքով: Հինգերորդ՝ իմ ամուսնոյս անունով եկեղեցու շինութեան համար ստորագրուած քսանուհինգ և ոչ երեսուն ռուբլին, չեմ վճարել ցայսօր հաշուատէսներին քաջ յայտնի պատճառներով և շատ ափսոսում եմ, որ հայրս իւր ստորագրուած 100 ռուբլին կանխիկ է վճարել. ուստի և իսպառ չեմ ցաւում, այլ հոգւով ուրախ եմ, հաշուատեսների իմաստուն վճռի համար: Այս ամենը այսպէս լինելով, չգիտեմ արդեօք ո՞ւմը հարկաւոր է առանց պատկառանքի կարմրել հասարակութեան դատաստանի առաջ, Տէր-Արիստակէս Բէնգլեանցին իբրև կոնսիստորիայի անդամի և Մողնույ Աւագ քահանայի՝ թէ ինձ, որ ճշմարտութիւնը յայտնի էի կացուցել լրագրութեան միջոցաւ: Այս հին բաները պարզելուց յետոյ, թող ներուի ինձ նոյն Տէր Արիստակէսին իբրև Մողնու եկեղեցու աւագ քահանայի, առաջարկել այս նոր հարցերը՝

1.) Ո՞ւր է տարել Մողնու եկեղեցու գաւթում զետեղուած Գայիանեան ուսումնարանի հին դռները և յատակի տախտակները:

2.) Ո՞ւմից են Մողնու ժողովրդականք պահանջում մօտ յիսուն կտոր ոսկեղէն և արծաթեղէն անօթներ և այլ իրեղէնք:

3.) Ո՞ւր է եկեղեցու ամենաթանկագին զիազարդը տանը պահում և իւր օգտին ծառայեցնելու համար ուրիշներին վարձով տալիս ու երեք ռուբլով չբաւականանալով, հինգ ռուբլի պահանջում:

4.) Ո՞ւր է իւր ծուխ ննջեցեալների տէրերից հրաւիրուած քահանաների և տիրացուների փողերից մի մի ռուբլի իւր գրպանը դնում և յետոյ գործը պարզելուց խղճմտանքի ոչ մի խայթ չզգում:

5.) Ո՞ւր է ուրիշների ստորագրութեամբ Էջմիածնի Սինօդին կեղծ հեռագիրներ ուղարկում և ճառը հասցնելուց յետոյ պարծենում:

6.) Ո՞ւր է եկեղեցու ժամկոչին արձակում լոկ այն պատճառով, որ նա եկեղեցապատկան ցենկի կողպանը առանց երեցփոխանի գիտութեան իւր աւագ քահանայի տունը տանել չէ համաձայնում:

Առ այժմ բաւական համարելով այս հարցերը, խոստանում եմ պատշաճ միջոց ունենալուս պէս հրատարակել 'ի գիտութիւն Ազգայնոց և 'ի զգուշութիւն այլոց Տէր-Արիստակէս Բէնգլեանցի ամբողջ վեց տարուայ ահագին թեմի կոնսիստորիայի [illegible] անդամական պաշտօնակատարութեան * * * * * * գործունէութեան հաշիւը:

Խօսքս վերջացնում եմ՝ ցանկալով խիստ քննութեան ենթարկել նորա յայտնի քաջագործութիւնները:

Պօղոս Քալանեանց:

Дозволено Цензурою, Тифлисъ 20 Апрѣля 1883 года.

Тип. А. Меликъ-Шахназарова, на Воронц. Наб. ՏՊԱՐԱՆ Ա. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ, ՎՈՐ. ՆԱԲ.

281.64
Բ-13
2013
(100)
4542
ՀՀ Ազգային գրադարան
NL0031460
281.64
Ք-13

2010

4399